Դրամաշնորհային աջակցություն «Մարդկային անվտանգության ծրագրերի» համար ՖՏ 2023.

«Սյունիքի մարզի Կավճուտ գյուղի ջրամատակարարման համակարգի կառուցման» ծրագիր

Երևան՝ 29 հունվարի, 2025թ.

2025 թվականի հունվարի 29-ին Քաջարանի համայնքապետարանում տեղի ունեցավ «Սյունիքի մարզի Կավճուտ գյուղի ջրամատակարարման համակարգի կառուցման» ծրագրի ավարտական արարողությունը: Արարողությանը ներկա էին Հայաստանում Ճապոնիայի դեսպան պարոն Առկի Յուտական, Քաջարան համայնքի ղեկավար պարոն Մանվել Փարամազյանը, ինչպես նաև ծրագրի շահագրգիռ կողմեր և տեղի բնակիչներ:

Այս ծրագրի նպատակն է գյուղում հիմնել ջրամատակարարման համակարգ՝ տեղադրելով նոր ջրատարներ (ջրառի խողովակ՝ 1,320 մ, բաշխիչ խողովակ՝ 1,190 մ, ընդհանուր երկարություն՝ 2,510 մ)՝ մոտակա գետից յուրաքանչյուր ընտանիքին ջուր մատակարարելու համար: Այս ծրագրի արդյունքում բնակիչները ստացան առօրյա կյանքի համար անհրաժեշտ ջրի կայուն հասանելիություն, ինչը կնպաստի տնտեսական անկախությանը և կենսապահովման բարելավմանը այն կանանց համար, ովքեր մինչ այս կանոնավոր կերպով զբաղված էին ջրահավաքով: Բացի այդ, գյուղը կկարողանա տեղավորել Լեռնային Ղարաբաղից տեղահանվածների վեց ընտանիք: Նախկինում գյուղի բնակիչները պետք է մոտ 300-900 մ ճանապարհ անցնեին ջուր հավաքելու համար, ինչը զգալի բեռ էր հատկապես կանանց համար: Այս աջակցությունը լուծեց նման հրատապ մարտահրավերները:

Քաջարան համայնքի ղեկավար Մանվել Փարամազյանը շնորհակալություն հայտնեց՝ նշելով. «Ճապոնիայի աջակցության շնորհիվ Կավճուտ գյուղում այժմ տեղադրված են ջրամատակարարման սարքեր, որոնք թույլ են տալիս բնակիչներին ցանկացած պահի օգտվել մաքուր խմելու ջրից՝ բարելավելով գյուղի կյանքը: Մինչ Քաջարան համայնքը առերեսվում է ենթակառուցվածքների հետ կապված բազմաթիվ մարտահրավերների, ներառյալ ջրի, կոյուղու և էլեկտրաէներգիայի համակարգերի, Ճապոնիայի աջակցությունը մեզ մեծ քաջալերություն է տվել: Մենք ցանկանում ենք մեր շնորհակալությունը հայտնել կառավարությանը և Ճապոնիայի ժողովրդին»:

Դեսպան Առկի Յուտակայի շնորհավորական ելույթը

Դեսպան Առկին ջուր խմեց նոր տեղադրված ջրագծից

Դեսպան Առկիին ողջունում են ծրագրի շահագրգիռ կողմերը

Դեսպան Առկին ստուգում է նոր տեղադրված ջրավազանը